ՀՀ Արմավիրի մարզի Ամասիայի գյուղապետարան

04402499
03-13/21
03.06.2011թ.

ՀՀ Արմավիրի մարզի մարզպետ
պր-ն Ա.Դահրամանյանին

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 02.05.2011 թվականի թիվ 1 Ա որոշումը:

Ամասիա համայնքի ղեկավար **Ռ.Հովհաննիսյան**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 5990-11
«09» 06 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 1Ա

02.05.2011թ. ԱՄԱՍԻԱ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 6Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 4Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով,«Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով,72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի մարտի 22-ի թիվ 01/07.2/298-10 և 2011 թվականի ապրիլի 15-ի թիվ 01/07/1162-11 գրությունները.

որոշում եմ՝

1. Համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 17-ի «ՀՀ Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 6 Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
1)Որոշման N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2010 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամասիա գյուղական համայնքի ղեկավարի 2009

թվականի փետրվարի 17-ի թիվ 6-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N4 Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Հովհաննիսյան

2011 թվականի մայիսի 2

գ. Նոր Ամասիա